աւելի նա ջորեպան էր: Ամբողջ Փոքր Ասիան, Արաբիան, Միջագետքը մինչեւ Եգիպտոս նրա քարաւանի ընդարձակ ասպարէզն էր: Շատ անգամ բեռնէր էր վերառնում դէպի Կովկաս, Պարսկաստան եւ հասցնում էր մինչեւ Սպահան, Շիրազ եւ Բանդար-բուշեր: Նրա հաւատարմութիւնը օրինակելի էր: Վաճառականները ոսկիների տոպրակները առանց համբարելու էին յանձնում նրան: Ամէն մի քաղաքում, երբ գիտէին, որ Թոխմախ-արթինի քարաւանը մի կամ երկու ամսից յետոյ պէտք է յայտնոի, վաճառականները, որքան էլ շտապելիս լինէին, դարձեալ սպասում էին, մինչեւ նա գայ, որ իրանց բեռները կամ արծաթը նրան յանձնեն: Ամէնքին յայտնի էր այն անցքը, որ մի անգամ Լորիստանի անապատներով անցնելիս դէպի Պարսից ծոցը, Բախտիարի (հին բակտրիացիք) կոչոած ելուզակները մի քանի հարիւր հոգով յարձակոեցան նրա քարաւանի վրայ եւ ամէն ինչ կողոպտեցին: Ինքը Արթինը կռոի ժամանակ սաստիկ վէրքեր ստացաւ: Նրա ծառաներից շատերը սպանոեցան: Այդպիսի դէպքերում վաճառականները շատ ներողամիտ են լինում. եթէ քարաւանի մէջ փող ունեն, գիտեն, որ կողոպտոած պէտք է լինի, իսկ եթէ մնացած եւս լինի, գիտեն, որ քարաւան-բաշին իրաւացի պատճառներ ունի ասելու, թէ կողոպտել են: Մի համադանցի պարսիկ վաճառական յանձնել էր Արթինին հինգ հազար ոսկի՝ Բաղդադ տանելու, երբ պատահեց յիշեալ անցքը: Համադանցին իր ոսկիները բոլորովին կորած էր համարում: Բայց մի տարուց յետոյ յայտնոեցաւ Արթինը եւ դրեց նրա առջեւ ոսկիների պարկը:

— Այդ ի՞նչ է, Արթին. — հարցրեց վաճառականը:

— Ձեր ոսկիները, — պատասխանեց Արթինը:

— Միթէ՞ նրանք մնացել են, — հարցրեց վաճառականը, չհաւատալով իր աչքերին:

Արթինը պատմեց, թէ ելուզակների յարձակման ժամանակ նա այդ պարկը ձգեց մի փոսի մէջ, ծածկեց հողով ու քարերով: Ամիսներից յետոյ, երբ ինքը առողջացաւ, վէրքերը լաւացան, գնաց, որոնեց եւ պարկը իր տեղումը գտաւ, եւ եթէ այդքան ժամանակ ուշացրեց վերադարձնել, պատճառը իր հիւանդութիւնն էր:

— Շատ ապրե՛ս, Արթին, — ասաց պարսիկը: — Եթէ դու քրիստոնեայ չլինէիր, քո այդքան հաւատարմութեան համար քո տեղը միւս կեանքում Մուհամմեդի դրախտի ամենափառաւոր բաժնումը կը լինէր: Ե՛կ դու մահմեդական դարձի՛ր: Իմ աղջիկը եւ իմ հարստութեան կէսը քեզ կը տամ: